ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9
08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 19 անդամներ:

Բացակա էին՝ Ալիկ Մարտիրոսյանը, Լավրիկ Արեվշատյանը, Արմեն Կոստանյանը, Վարդուհի Բադալյանը, Էդգար Վարդանյանը, Նորայր Զախարյանը, Սամվել Զաքոյանը, Միքայել Միքայելյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր Գավառ համայնքի ղեկավար՝ Գուրգեն Մարտիրոսյանը

Նիստը արձանագրում էր Գավառի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Կարինե Մանուկյանը

ԼՍԵՑԻՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ***Գավառ համայնքի ավագանին որոշում է.***

Հաստատել Գավառ համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի առաջին նիստի օրակարգը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 161-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՏԻԳՐԱՆ ԲՐՍԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ ***Գավառ համայնքի ավագանին որոշում է.***

1. Ի գիտություն ընդունել Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին հաղորդումները՝ համաձայն հավելվածի (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 162-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՏԻԳՐԱՆ ԲՐՍԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ , 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մարտի 27-ի N 356-Լ որոշմամբ հաստատված «Բուսաբուծության աջակցության 2025 թվականի» ծրագիրը, ***Գավառ համայնքի ավագանին որոշում է***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 2-Ն որոշման 1,2, 3 և 6 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 163-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 346-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՏԻԳՐԱՆ ԲՐՍԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28) կետի դրույթներով, հիմք ընդունելով «Գավառ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային հիմնարկի հաստիքացուցակում փոփոխություններ և հաստիքների կրճատումներ կատարելու մասին «Գավառ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային հիմնարկի տնօրենի գրությունը, ***Գավառ համայնքի ավագանին որոշում է***

1.Գավառի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների 2025 թվականի թվաքանակները, հաստիքացուցակները, կառուցվածքները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» Գավառ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 10-ի N 346-Ա որոշմամբ հաստատված «Գավառ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային հիմնարկի հաստիքացուցակում կատարել փոփոխություններ և հաստիքացուցակը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 164-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԵՎՈՐԳ ԱՂԼԱՄԱՋՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ կետի և 245-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով, Գավառ համայնքի ավագանու 12.04.2024թ. թիվ 107-Ա որոշմամբ հաստատված կարգով՝ ***Գավառ համայնքի ավագանին որոշում է.***

1.Շարժական և անշարժ գույքերի գույքահարկերի գծով, առաջացած տույժերը ըստ ներկայացված ցուցակների փոխհատուցել Գավառ համայնքի 2025 թվականի համայնքի բյուջեի միջոցների հաշվին, քանի որ ցուցակներում ընդգրկված անձինք համայնքի բյուջե վճարել են իրենց սեփականություն համարվող գույքերի հարկերը առանց տույժ-տուգանքների.

Ներկայացվում են ցուցակները ըստ բնակավայրերի.

1. Գավառ քաղաք

ա.հողի հարկի գծով տույժ՝	447 519 ՀՀ դրամ
բ.շենք-շինությունների գծով գույքահարկի տույժ՝	177 481 ՀՀդրամ
գ.փոխադրամիջոցների գծով գույքահարկի տույժ՝	321 054 ՀՀդրամ
դ.անշարժ գույքի գույքահարկի տույժ՝	39 810 ՀՀդրամ
Ընդամենը՝	985 864 ՀՀ դրամ

2.Նորափուս բնակավայր

ա.հողի հարկի գծովտույժ՝	459 294 ՀՀ դրամ
բ.շենք-շինությունների գծով գույքահարկի տույժ՝	54 866 ՀՀդրամ
գ.փոխադրամիջոցների գծով գույքահարկի տույժ՝	212 625 ՀՀ դրամ
դ.անշարժ գույքի գծով տույժ՝	141 395 ՀՀ դրամ
Ընդամենը՝	868 180 ՀՀ դրամ

3. Լանջաղբյուր բնակավայր

ա.հողի հարկի գծով տույժ՝	19 060 ՀՀ դրամ
Ընդամենը՝	19 060 ՀՀ դրամ

4. Կարմիրգյուղ բնակավայր

ա.հողի հարկի գծով տույժ՝	267 000 ՀՀ դրամ
Ընդամենը՝	267 000 ՀՀ դրամ

5. Սարուխան բնակավայր

ա.հողի հարկի գծով տույժ՝	172 272 ՀՀ դրամ
բ.շենք-շինությունների գծով գույքահարկի տույժ՝	80 098 ՀՀ դրամ
գ.փոխադրամիջոցների գծով գույքահարկի տույժ՝	8 396 ՀՀ դրամ
Ընդամենը՝	260 766 ՀՀ դրամ

Ըստ բնակավայրերի ներկայացված ցուցակների տույժերի գծով տալ արտոնություններ և արտոնությունների ընդհանուր գումարը ՝ 2 400 870 /երկու միլիոն

չորս հարյուր հազար ութ հարյուր յոթանասուն/ ՀՀ դրամ փոխհատուցել Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեով այդ նպատակով նախատեսված 1.6.1. (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) գործառնական դասակարգման 4823 (հարկեր և տուրքեր) տնտեսագիտական հոդվածով նախատեսված միջոցների հաշվին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 165-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՏՈՒՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ՉՈՒՆԵՑՈՂ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԱՐԾՐՈՒՆ ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ)

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 21) կետով, ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց /մշտական/ օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» 2010թ. հունվարի 14-ի N16-Ն որոշման դրույթներով՝ ***Գավառ համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Նորատուս բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, օգտագործման սահմանափակումներ չունեցող 05-071-0237-0068 կադաստրային ծածկագրերով, 0,4846 հա մակերեսով, գյուղատնտեսական նշանակության վարելահողը գյուղատնտեսական մթերքների արտադրության նպատակով 2049 թվականը ներառյալ օգտագործման ժամկետով մրցույթով տրամադրելու վարձակալության:
2. 2-րդ կարգի մեկ հեկտար վարելահողի տարեկան վարձավճարը սահմանել՝ 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 166-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆՈՐ ՁԵՔԲԵՐՎԱԾ ԳՈՒՅՔԵՐԸ ԱՄԵՆԱՄՅԱ ՊԱՐՏԱԴԻՐ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑԱՆԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԻԼԻԹ ԲԱԲԻՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ***Գավառ համայնքի ավագանին որոշում է.***

1. Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող նոր ձեքբերված գույքերը ներառել ամենամյա պարտադիր գույքագրման ցանկում /Հավելված 1/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 167-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐՍԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-մասի 1-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 17.01.2025թ. արտահերթ նիստի թիվ 2-Ն որոշման պահանջները, սոցիալական աջակցության տրամադրման հանձնաժողովի 01.09.2025թ. եզրակացությունը. առաջարկվում է.

1. Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեով նախատեսված 10 բաժնի 7 խմբի 1 դասի գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով նախատեսված գումարից 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ դրամական հատուցում տրամադրել Լեռնային Ղարաբաղից տեղահանված Վալերի Դոլյանի հուղարկավորության ծախսերին :
Գումարը վճարել համապատասխան ծառայություն մատուցող իրավաբանական անձին:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 168-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐՍԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-մասի 1-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 17.01.2025թ. արտահերթ նիստի թիվ 2-Ն որոշման պահանջները, սոցիալական աջակցության տրամադրման հանձնաժողովի 08.09.2025թ. եզրակացությունը՝ ***Գավառ համայնքի ավագանին որոշում է.***

1.Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեով նախատեսված 10 բաժնի 7 խմբի 1 դասի գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով նախատեսված գումարից 65 000 (վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ դրամական հատուցում տրամադրել համապատասխան բուժ սպասարկում իրականացնող կազմակերպությանը, Գավառ համայնքի Ազատության փողոց տուն 31 հասցեի բնակիչ Սոս Գագիկի Խանձրաձյանի ձախ ոլոքի վիրահատական բուժումը իրականացնելու նպատակով:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 169-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ, 62-րդ 48-րդ և 66-րդ հոդվածների, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների դրույթներով, հիմք ընդունելով «Բայազետ Սանէներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմումը, լիցենզավորված գնահատողի կողմից տրված հողամասի գնահատման արժեքը՝ ***Գավառ համայնքի ավագանին որոշում է.***

1.Համաձայնություն տալ ք. Գավառ թիվ 6 հողամաս հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-1134-0033 կադաստրային ծածկագրով, 11.98185 հա մակերեսով, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության, էներգետիկայի գործառնական նշանակության սահմանափակումներ չունեցող հողատարածքն արևային կայաններ տեղադրելու նպատակով, գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի

միջոցով օտարելու նշված հողամասի վարձակալ «Բայազետ Սանէներջի» ՍՊԸ-ին:
2. 05-001-1134-0033 կադաստրային ծածկագրով, 11.98185 հա մակերեսով հողատարածքի ուղղակի վաճառքի մեկնարկային գին սահմանել համաձայն «Ֆուլ Քոնսալթինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից գնահատման եզրակացությունում նշված 102 258 000 /մեկ հարյուր երկու հազար երկու հարյուր հիսունութ հազար / ՀՀ դրամ արժեքի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 170-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ, 62-րդ 48-րդ և 66-րդ հոդվածների, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների դրույթներով, հիմք ընդունելով «Բայազետ Սանէներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմումը, լիցենզավորված գնահատողի կողմից տրված հողամասի գնահատման արժեքը՝
Գավառ համայնքի ավագանին որոշում է.

1.Համաձայնություն տալ ք. Գավառ թիվ 5 հողամաս հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-1134-0032 կադաստրային ծածկագրով, 12.01817 հա մակերեսով, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության, էներգետիկայի գործառնական նշանակության սահմանափակումներ չունեցող հողատարածքն արևային կայաններ տեղադրելու նպատակով, գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարելու նշված հողամասի վարձակալ «Բայազետ Սանէներջի» ՍՊԸ-ին:
2. 05-001-1134-0032 կադաստրային ծածկագրով, 12.01817 հա մակերեսով հողատարածքի ուղղակի վաճառքի մեկնարկային գին սահմանել համաձայն «Ֆուլ Քոնսալթինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից գնահատման եզրակացությունում նշված 106 288 000 /մեկ հարյուր վեց հազար երկու հարյուր ութսունութ հազար/ ՀՀ դրամ արժեքի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 171-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21) կետի դրույթներով, հիմք ընդունելով լիցենզավորված գնահատողի կողմից տրված հողամասի գնահատման արժեքը՝ ***Գավառ համայնքի ավագանին որոշում է.***

1.Համաձայնություն տալ ք. Գավառ Ազատության 2-րդ փողոց թիվ 6/58 հողամաս հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0291-0035 կադաստրային ծածկագրով, 0.0045 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության սահմանափակումներ չունեցող հողատարածն՝ ավտոտնակ կառուցելու նպատակով, աճուրդային կարգով օտարելուն:
2. 05-001-0291-0035 կադաստրային ծածկագրով, 0.0045 հա մակերեսով հողատարածքի աճուրդով վաճառքի մեկնարկային գին սահմանել «Ֆուլ Քոնսալթինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից գնահատման եզրակացությունում նշված 236 000 /երկու հարյուր երեսունվեց հազար/ ՀՀ դրամ արժեքի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 172-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին»،Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21) կետի դրույթներով, հիմք ընդունելով լիցենզավորված գնահատողի կողմից տրված հողամասի գնահատման արժեքը՝ ***Գավառ համայնքի ավագանին որոշում է.***

1.Համաձայնություն տալ ք. Գավառ Ազատության փողոց 1-ին նրբանցք 1-ին փակուղի թիվ 4/48 հողամաս հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0289-0251 կադաստրային ծածկագրով, 0.0032 հա մակերեսով,

բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության սահմանափակումներ չունեցող հողատարածքն ավտոտնակ կառուցելու նպատակով, աճուրդային կարգով օտարելուն:
2. 05-001-0289-0251 կադաստրային ծածկագրով, 0.0032 հա մակերեսով հողատարածքի աճուրդով վաճառքի մեկնարկային գին սահմանել «Ֆուլ Քոնսալթինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից գնահատման եզրակացությունում նշված 180 000 /մեկ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ արժեքի: 3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 173-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21) կետի դրույթներով, հիմք ընդունելով լիցենզավորված գնահատողի կողմից տրված հողամասի գնահատման արժեքը՝ ***Գավառ համայնքի ավագանին որոշում է.***

1.Համաձայնություն տալ ք. Գավառ Գ. Միքայելյան փողոց թիվ 1/2 հողամաս հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0312-0028 կադաստրային ծածկագրով, 0.00281 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության սահմանափակումներ չունեցող հողատարածքը ավտոտնակ կառուցելու նպատակով, աճուրդային կարգով օտարելուն:
2. 05-001-0312-0028 կադաստրային ծածկագրով, 0.00281 հա մակերեսով հողատարածքի աճուրդով վաճառքի մեկնարկային գին սահմանել «Ֆուլ Քոնսալթինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից գնահատման եզրակացությունում նշված 160 500 /մեկ հարյուր վաթսուն հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ արժեքը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 174-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21) կետի դրույթներով, հիմք ընդունելով լիցենզավորված գնահատողի կողմից տրված հողամասի գնահատման արժեքը՝ ***Գավառ համայնքի ավագանին որոշում է.***

1.Համաձայնություն տալ ք. Գավառ Ազատության փողոց թիվ 26/2 հողամաս հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0300-0202 կադաստրային ծածկագրով, 0.01091 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության սահմանափակումներ չունեցող հողատարածքն առևտրի և սպասարկման կետ կառուցելու նպատակով, աճուրդային կարգով օտարելուն:
2. 05-001-0300-0202 կադաստրային ծածկագրով, 0.01091 հա մակերեսով հողատարածքի աճուրդով վաճառքի մեկնարկային գին սահմանել «Ֆուլ Քոնսալթինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից գնահատման եզրակացությունում նշված 1 064 000 /մեկ միլիոն վաթսունչորս հազար/ ՀՀ դրամ արժեքի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 175-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածով՝ ***Գավառ համայնքի ավագանին որոշում է.***

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի երկրորդ նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի թվականի հոկտեմբերի –ին, ժամը -ին:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 176-Ա)*

Ավագանու անդամներ

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՀՐԱՅՐ ԳՈՒԼԱԲՅԱՆ

ԱՐՍԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԳՆԵԼ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՕՆԻԿ ԴԱՆՈՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՆՈՒՆԵ ՄԻՐԻԲՅԱՆ

ԱՆԻ ՊԵՏՈՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱԴԱՄՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԻՐԻԲՅԱՆ

ԶԱՐՈՒՀԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՕՀԱՆ ՕՀԱՆՅԱՆ

ՆԱԻՐԱ ԽԱՆԴԱՆՅԱՆ

ՎԱԼՏԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Կարինե Մանուկյանը

_____